ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.04.2020
345-25

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
նախագահ Տաթևիկ Ռևազյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի տիկին Ռևազյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 13.04.2020-ի տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն 14.04.2020-ին պատասխան գրությամբ մերժել է տրամադրել պահանջված տեղեկությունը:

Մերժումը սակայն անօրինական է, քանի որ չի համապատասխանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին: Համաձայն այս դրույթի՝ «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ ***նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»:***

Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (EASA)՝ ՀՀ Քաղաքացիական ավիացիային առնչվող զեկույցը և/կամ զեկույցի ամբողջական տեքստի հղումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան